

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՎԻՐԱՅԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ ՆՇՎԵՑ ԽԱՉՎԵՐԱՑԻ ՏՈՆԸ

2024 թվականի սեպտեմբերի 15-ին, Վիրահայոց թեմի եկեղեցիներում նշանավորվեց Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հինգ տաղավար տոններից վերջինը՝ Խաչվերացը կամ Խաչի փառաբանության տոնը:

Թբիլիսիի Սուրբ Գեորգ Առաջնորդանիստ Եկեղեցու, Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս Եպիսկոպոս Դավթյանի հանդիսապետությամբ, տոնական Սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տեր Հուսիկ քահանա Գարությունյանը:



Տոնական Սուրբ պատարագին ներկա էին Վրաստանի խորհրդարանի «Վրացական երազանք» ժողովրդավարական Վրաստան խմբակցությունից Դավիթ Կաճարավան, Թբիլիսիի սակրեբուլոյի Կրծանիսի շրջանի մեծամասնական պատգամավոր, Վերստուգիչ հանձնաժողովի նախագահ Լեւան Զափարիձենե և Թբիլիսիի Կրծանիսի շրջանի վարչության նախագահ Բեքա Միքաուտաձեն:

Նույն օրը Հավլաբարի Սուրբ Էջմիածին եկեղեցու, երեկոյան ժամերգությունից հետո, կատարվեց Սուրբ Խաչի թափոր: Հոգեւոր դասի առաջնորդությամբ՝ Խաչը պատեցվեց եկեղեցու չորս կողմերում ու ժողովուրդն օրհնվեց վարդաջրով: Այնուհետև օրհնվեց ռեհանը, որը համարվում է Խաչի ծաղիկ և բաժանվեց հավատացյալներին:

Հավարտ Սուրբ պատարագի, Թեմակալ առաջնորդը քարոզ խոսեց օրվա խորհրդի, հավատքի կարեւորության և Խաչի նշանակության մասին և շնորհավորեց ներկաներին տաղավար տոնի կապակցությամբ:

Խաչվերացի տոնը Սրբազան պատարագով և հանդիսավորությամբ նշանավորվեց Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանի Ախալքալաքի, Նինոծմինդայի, Ախալցխի և Քվեմո Զարբլիի տարածաշրջանի, Մառնեուլիի, Թեթրիժարոյի, Ծավկայի մունիցիպալիտետների գյուղերում և Բաթումիի հայկական եկեղեցու: **ՍՈՒՄԱՆՆԱ ԽԱՉՏՐՁԱՆ**

ՊՐԵՍԻԵՐԱ

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-ԻՆ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԻ «ՇՈՒՇԱՆԻԿ ԹԱԳՈՒՅՈՒ ԳՈՒՄԱՐՏԱԿԸ» ՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ ՖԻԼՄԸ

Սեպտեմբերի 30-ին, ժամը 19:00-ին Թբիլիսիի Ամիրանի կինոթատրոնում (Մերաբ Կոստավայի փող. թիվ 31/1) կկայանա երիտասարդ վավերագրիչներ Դավիթ Ղուլիկյանի և Արթուր Մարտիրոսյանի «Շաշունիկ թագուհու գունարտակը» վավերագրական ֆիլմի ցուցադրումը:

Ֆիլմը նվիրված է արխայիայում Վրաստանի տարածքային ամբողջականության, ազատության և անկախության համար մարտական գործողություններին մասնակից եւ մարտերում զոհված ազգությամբ հայ Վրաստանի քաղաքացիներին:

Սուտքն ազատ է:

ՍՊՈՐՏ

ԸՆԽՄԱՏ. ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՉԱՅԱՍՏԱՆԻ ԹԻՄԵՐԸ ՉԻՋՇՈՒՆ ՄԻԱՅՆ ՈՒՃԵՂԱԳՈՒՅՆՆԵՐԻՆ

Հունգարիայի մայրաքաղաք Բուդապեշտում եզրագծող հատեց Շախմատի համաշխարհային 45-րդ Օլիմպիադան:

Մրցաշարում անմխընթաց հաջողության հասավ Հնդկաստանի հավաքականը: Թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց օլիմպիական մրցաշարում հնդիկ շախմատիստ-շախմատիստուհիներն ուժեղագույնն էին: Տղամարդկանց մրցաշարում, Հնդկաստանի հետ միասին, առաջին եռյակում էին ԱՄՆ-ի և Ուզբեկստանի հավաքականները: Հայաստանի հավաքականը 6-րդն էր, իսկ Վրաստանի թիմը՝ 19-րդը:

Կանանց մրցաշարում, Հնդկաստանի հետ միասին, մրցանակային տեղերը զբաղեցրին Ղազախստանի և ԱՄՆ-ի հավաքականները: Հայաստանի և Վրաստանի կանանց թիմերը զբաղեցրին, համապատասխանաբար, 5-րդ և 6-րդ տեղերը:

Հատկանշական է, որ թե՛ տղամարդկանց և թե՛ կանանց մրցաշարերում երկրորդից մինչև ութերորդ տեղեր զբաղեցնող թիմերը հավաքել են նույն միավորները, ուղղակի հորիզոնականները բաշխվել են:

վել են՝ ելնելով հավաքականների դասակարգման վարկանիշից:

Ավելացնենք, որ Հայաստանի շախմատի տղամարդկանց հավաքականը Շախմատի միջազգային ֆեդերացիայի՝ ՖԻԴԵ-ի կողմից ճանաչվել է 100-ամյակի լավագույն թիմ:

ՖԻՖԱ-Ի ԴԱՍԱԿԱՐԳԱՆ ՆՈՒՅԱԿԸ՝ ՆՈՒՅԱԲԵՐԱՑ ԽԱՐԻ ՆԱՅԵԼԻ

Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան (ՖԻՖԱ) հրապարակեց ազգային հավաքականների վարկանիշային նոր աղյուսակը:

Աշխարհի խմբային առաջնության առաջին երկու հանդիպումների արդյունքներն իրենց արտացոլումը գտան նոր աղյուսակում: Այսպես Վրաստանի հավաքականը առաջադիմեց չորս հորիզոնականով և ներկա դրությամբ զբաղեցնում է 66-րդ հորիզոնականը:

Դասակարգման աղյուսակի առաջին տասնյակում փոփոխություն չկա: Լավագույնների շարքում են Արգենտինան, Ֆրանսիան, Իսպանիան, Անգլիան, Բրազիլիան, Բելգիան, Նիդերլանդները, Պորտուգալիան, Կոլումբիան, Իտալիան:

«Վրաստան» թերթի խմբագրությունը տեղեկացնում է, որ 92 տարեկան հասակում մահացել է տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գեղանկարչական աշխատանքների հայտնի հավաքող, մեր թերթի մեծ բարեկամ

Ալեքսանդր Բոզդանի Պիրավորված

Խմբագրությունն իր գորակցությունն է հայտնում Պիրավորված ընտանիքի անդամներին, հարազատներին ու մերձավորներին:

Հոգեհանգիստը՝ սեպտեմբերի 28-ին, հուղարկավորությունը՝ սեպտեմբերի 29-ին, ժամը՝ 14:00-ին՝ Գ.Լեոնիձեի (Նախկին՝ Կիրովի) փողոց, թիվ 18-ից:



Table with 6 columns and 10 rows containing numbers 1 through 58, likely a calendar or grid.

Large advertisement section with stylized letters 'Խ Ա Չ Բ Ա Ռ' at the top. It contains text about sports, a list of names under 'ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉՔԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ', and contact information for 'Վրաստան' newspaper.

Advertisement for 'Վրաստան' newspaper, including contact details and subscription information.

Advertisement for 'Վրաստան' newspaper, including contact details and subscription information.

Advertisement for 'Վրաստան' newspaper, including contact details and subscription information.